ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«10» 08 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0142-23

Ձեռնարկողը՝ ***«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ***
ք.Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***Մրգաշատ բնակավայրում Վ. Ափոյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0142-23

< 10 > օգոստոսի 2023թ.

Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում նախատեսվող Վ. Ափոյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Մրգաշատ բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ ներկայացված «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից՝ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում նախատեսվում է կառուցել Վ. Ափոյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը: Դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծն իրականացվելու է «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում՝ Ասիական Զարգացման բանկի աջակցությամբ: Ծրագրի իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը Գ կատեգորիայի գործունեության տեսակ է:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Մեծամորի համայնքապետարանի կողմից տրամադրված 2022թ. օգոստոսի 16-ի N 164 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման N 16022021-04-0059 վկայականով ամրագրված 1.3115հա հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ 04-067-0132-0008), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա հողամասը գտնվում է Մրգաշատ 5-րդ փողոց 15 հասցեում: Տարածքը ծանրաբեռնված է հին դպրոցի շենքով և օժանդակ շինություններով, որոնք ապամոնտաժվելու են: Քանդման ենթակա շինություններն են դպրոց, կաթսայատուն, զուգարան, արհեստանոց, ցանկապատ: Դպրոցի տարածքում գտնվող Վարդգես Ափոյանի հուշարձանը պահպանվելու է, հուշարձանը չվնասելու նպատակով իրականացվելու են համապատասխան միջոցառումներ: Տարածքում առկա է

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

մոտ 20 հատ դեկորատիվ ծառ, ծառահատում և կանաչ գոտու խախտումներ տեղի չեն ունենալու:

Կառուցապատման ենթակա տարածքի հարևանությամբ (10-80 մ) գտնվում են մեկ կամ երկու հարկանի բնակելի տներ:

Գործունեությունն իրականացվելու է երկու իրար հաջորդող փուլերով՝ մասնաշենքերի և օժանդակ կառույցների ապամոնտաժում և նոր շենքի կառուցում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևմտյան եզրային մասում: Ռելիեֆը հարթ է, փոքր թեքությամբ արևմուտքից արևելք, մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 852.0-852.5 մ սահմաններում: Ստորգետնյա ջրեր տեղամասում հայտնաբերվել են 5.3-5.5 մ խորությունների վրա, ֆիքսված նիշերից սեզոնային տատանումների ժամանակ գրունտային ջրերի մակարդակի առավելագույն բարձրացումը կարող է հասնել 0.5 մ: Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են: Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանալու վիզուալ տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի մակերես – 1.3115 հա,
- կառուցապատման մակերես – 3480 քմ / 26.55% /,
- կանաչապատ տարածք – 6270 քմ / 47.8% /,
- բարեկարգման մակերես /ճանապարհներ, ճեմուղիներ, հարթակներ/ - 3365մ^2 /25.65%/:

Համաձայն Հայտի տեղեկատվության՝ նոր կառուցվող դպրոցը տեղադրվելու է հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ: Դպրոցի շենքը երկհարկանի ուղղանկյունաձև ուրվագիծ է՝ 91,5 մ x 35,0 մ հիմնական առանցքային չափսերով, սեյսմիկ կարով բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Շենքի առավելագույն բարձրությունը 11,44 մ է: Կառուցվածքային համակարգը շրջանակային է, հիմքերը՝ ժապավենային: Տանիքածածկույթը բաղկացած է լինելու մակահալեցվող փաթթոցային նյութի 2 շերտից: Նոր կառուցվող մետաղական տիպային ցանկապատի ընդհանուր երկարությունը ներառյալ դարպասները կազմում է 476 մ: Ջրահեռացումն իրականացվելու է կազմակերպված:

Դպրոցի շենքում նախագծված են դասարանները, աշխատասենյակները, լաբորատոր սենյակները, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետները, սպորտդահլիճը՝ կից հանդերձարաններով, հանդիսությունների դահլիճը, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով 7 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ ներքին բակ՝ լսարաններին լուսավորություն ապահովելու և լրացուցիչ ռեկրեացիոն գոտի ստեղծելու համար: Բակային տարածքում նախատեսված են նաև բաց մարզադաշտ, մարզահրապարակ և վազքուղի: 572 մ^2 ընդհանուր մակերեսով նկուղային հարկը՝ ապահովված սանհանգույցներով և օդափոխության համակարգով, արտակարգ իրավիճակների ժամանակ ծառայելու է որպես ապաստարան՝ ելքային միջանցքով:

Հարակից ճանապարհներից դպրոցի տարածք մուտքերը երեքն են, արևելյան մասից երկու մուտք և արևմտյան մասից մեկ մուտք:

Դպրոցը նախատեսված է 432 աշակերտի համար, ուսուցիչների և անձնկազմի ընդհանուր քանակը մոտ 80:

Էներգախնայողության նպատակով շենքում իրականացվելու են միջոցառումներ, այդ թվում՝ արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելիության փոքր տոկոս ունեցող պատուհանների տեղադրում, օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով և այլն:

Շենքերի և շինությունների մատչելիությունն ապահովելու համար բնակչության սակավաշարժուն խմբերի համար ձեռնարկվելու են համապատասխան միջոցառումներ (սանհանգույցներ, թեքահարթակներ, ուղղահայաց ամբարձիչ):

Շահագործման փուլում դպրոցի գազամատակարարումն և էլեկտրամատակարարումն իրականացվելու են «Գազպրոմ Արմենիա» և «ՀԷՑ» ՓԲ ընկերությունների հետ գործող պայմանագրերի և տեխնիկական պայմանների համաձայն:

Ջրամիացումն ու ջրահեռացումն իրականացվելու է d=75մմ, P=1.2 մթն.պ/էթ Մրգաշատ 5-րդ փողոցով անցնող ջրագծից, որը սնվելու է համայնքային ցանցից: Կոյուղագիծը միանալու է տարածքում նոր կառուցվող կոյուղու մաքրման Tonac 100 սարքավորմանը: Մաքրման կայանը կատարում է եռաստիճան մաքրում, արտադրողականությունն ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 16 մ³/օր: Շահագործման ընթացքում առաջացող տիղմը կհեռացվի ըստ անհրաժեշտության և կօգտագործվի որպես պարարտանյութ դպրոցի կանաչապատ հատվածների համար:

Ջերմամատակարարումն իրականացվելու է սեփական կաթսայատնից՝ տեղակայված դպրոցի տարածքում: Ջեռուցման կայանը բաղկացած է երկու կաթսաներից՝ հագեցած մոդուլացնող երկակի այրիչներով (բնական գազ և հեղուկ վառելիք) և ծխատարի էկոնոմիզատորի հանդերձանքով: Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերը կհեռացվեն Մ426x10մմ տրամագծով ծխնելույզի միջոցով: Տանիքի (թեքությունը 7⁰) հարավ նայող լանջին նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում:

Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ:

Շին. աշխատանքների իրականացման համար ընդհանուր տևողությունը կազմում է 600 օրացուցային օր, բանվորների առավելագույն քանակը 44 մարդ:

Որպես շինհրապարակ օգտագործվելու է ամբողջ հողատարածքը և կազմակերպելիս ղեկավարվելու են քաղաքաշինության, տեխնիկականական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով: Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելու են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ մոբիլային վերամբարձ կռունկ, էքսկավատոր կախովի սարքավորումներով, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, գլդոն, բուլդոզեր և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու է ուղիղ կտրվածքի քար, ավազ, ցեմենտ և այլն: Անհրաժեշտ բետոնի խառնուրդը մատակարարվելու է բետոնատար ավտոմեքենաներով մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված սպասարկման կետերում, շինարարության համար անհրաժեշտ նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսների վրա:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է շուրջ 4600 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 1400 մ³ հետլիցք: Ավելցուկային հողային զանգվածը (3200մ³)

կտեղափոխվի Մրգաշատ բնակավայրի վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված վայր: Հետլիցքի համար նախատեսված հողային զանգվածը պահպանվելու է շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար իրականացվելու է ջրցան: Հողային աշխատանքների իրականացման համար կիրառվելու է էքսկավատոր, դժվար հասանելի մասերում աշխատանքը կատարվելու է ձեռքով:

Հիմնական թափոնատեսակը կենցաղային չտեսակավորված աղբն է (բացառությամբ խոշոր եզրաչափերի՝ 9 մ³) և շինարարական աղբը (ներառյալ քանդման աշխատանքներից՝ 900 մ³): Շինարարական աղբը տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը շինարարության և շահագործման փուլերում հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի այրումը:

Շինարարության ժամանակ ջուրն օգտագործվելու է տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար, ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1575.42 մ³/շին. ժամ: Ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից:

Տեղումներից, տրանսպորտային միջոցների, սարքավորումների լվացումից առաջացող հոսքաջրերն ուղորդվելու են շինարարական հրապարակին կից տեղադրվող 25 մ³ տարողությամբ պարզարան: Պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումը և բարեկարգումն իրականացվելու են ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան՝ բարեկարգվելու է 9635 քմ մակերեսով տարածք: Համաձայն Հայտի տեղեկատվության՝ 6270 քմ մակերեսով տարածքում նախատեսվում է ստեղծել նոր կանաչապատ գոտի և լրացուցիչ իրականացնել ծառատունկ (տնկվելու են 8 հատ թղկի սրատերև կարմիր, 17 հատ գնդաձև իլենի, 4 հատ սյունաձև թույա, 28 հատ բարդի արծաթափայլ, 12 հատ բարբարիս, 11 հատ ասպիրակ, 3 հատ ֆորցիզիա, 12 հատ խենոմելես, 9 հատ լաբոռնում անագիրատերև, 18 հատ եղևնի կովկասյան, 2 հատ գիհի կազակական, 11 հատ հուդայածառ, 6 հատ ձիակասկ, 244 գմ սամշիտ, 78 մ² ծաղկանոց, 5019 մ² սիզամարգ):

Համաձայն Հայտի տեղեկատվության՝ հողի բերրի շերտը բացակայում է: Կանաչապատման համար անհրաժեշտ բնահողի ծավալը կկազմի 1250 մ³, ձեռքբերումը, տեղափոխումը, պահեստավորումը, հետագա օգտագործումն իրականացվելու է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ոռոգման ցանցն իրականացվելու է կազմակերպված: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգումը կազմակերպելու համար: Ոռոգման համակարգը սնվելու է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվելու է մաքրված ջուրը և ջրասույզ պոմպի (Гном 16-16)-ի միջոցով մղվելու է ոռոգման համակարգ: Ավելցուկային ջրերը հեռացվելու են դրենաժային 15.0մ խորությամբ Մ125մմ հորատանցքով, որի մեջ տեղադրվելու է պոլիէթիլենային խողովակ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Շրջակա միջավայրի վրա թվարկված աշխատանքների վնասակար

ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, որոնցից են՝

- օդային ավազանն աղտոտումից պահպանելու համար կառուցապատման ենթակա տարածքի ցանկապատում, շինությունների ծածկում անթափանց թաղանթով համապատասխան բարձրության;
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին (օրեկան 2-3 անգամ);
- շինարարական նյութերի (ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով;
- հողային ռեսուրսների պահպանության համար նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում;
- շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար ավազի կամ մանրախճի տեղադրում, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում փռված ավազի/մանրախճի տեղափոխում համապատասխան աղբավայր՝ փոխարինելով նորով;
- շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումները խուսափել կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում օրվա ցերեկային ժամերին, անսարք վիճակում գտնվող մեքենաների շահագործման բացառում;
- թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների նախապես հստակեցում շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

Դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ (երեք ամիսը մեկ հաճախականությամբ);
- փոշու առաջացմանը և կանխարգելմանն ուղղված մշտադիտարկումներ օրական;
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ (երեք ամիսը մեկ հաճախականությամբ);
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների և այլն;
- տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով մշտադիտարկում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 700 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն Հայտի տեղեկատվության՝ դպրոցը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա

բացասական ազդեցությունները կրելու են ժամանակավոր և տեղայնացված բնույթ, լինելու են թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք բացառվելու կամ մեղմվելու են բնապահպանական միջոցառումների իրականացմամբ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում մասնակիցները դրական են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է ապահովել բնապահպանական միջոցառումների իրականացումը, հետևել ժամանակացույցին, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
- Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել՝ համաձայն լիազոր մարմին ներկայացված և հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի՝ պահպանելով Հայտում ամրագրված 47.8% կանաչապատման մակերեսը:
- Շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների բեռնվածությունը:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված՝ Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության Հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան